Մարդու
Իրավունքների
Տուն
Երևան

2018թ.

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Մարդու իրավունքների տուն Երևան

ՏԱՐԵԿԱՆ ՀԵԿՈՒՅՑ

Երևան, 2019 թ.

CC BY NC ND

Բովանդակություն

Նախաբան 3

Ուսանողների իրավունքների սահմանափակումները, նրանց նկատմամբ ճնշումներն ու բռնության դեպքերը 4

Կանանց իրավունքների պաշտպաններին թիրախավորելու և նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելու դեպքերը 6

Ասյա Խաչատրյանին թիրախավորելու դեպքերը 7

ՁԼՄ-ների դերը և լրագրողների աշխատանքը խոչընդոտելու դեպքերը 9

Տիրայր Մուրադյանի դատական գործով զարգացումները 10

Փաստաբանների աշխատանքը խոչընդոտելու դեպքերը 12

Փաստաբանների թիրախավորումները հանրային հնչեղություն ունեցող գործերով 12

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանների իրավունքների սահմանափակումներն ու գործունեությունը խոչընդոտելու դեպքերը 14

Շուռնուխ գյուղում ԼԳԲՏ ակտիվիստների նկատմամբ բռնության դեպքը 15

ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների պաշտպանների գործունեության պայմանները 16

Բնապահպանների նկատմամբ ճնշումները և թիրախավորելու դեպքերը 17

Բնապահպանները Լիդիան Արմենիայի հետ դատական գործերով 18

Խաղաղաշինական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու անհատների նկատմամբ ճնշումները 19

Վերջաբան 20

Նախաբան

2018 թվականը նշանավորվեց, այսպես կոչված, Թավշյա հեղափոխությամբ, դրան նախորդած և հաջորդած մի շարք կարևոր իրադարձություններով: «Մարդու իրավունքների տուն Երևան» հասարակական կազմակերպությունը դեռևս 2018 թ. դեկտեմբերի 7-ին հանդես եկավ «Իրավապաշտպանները հեղափոխական գործընթացներում» հատուկ զեկույցով (Հատուկ զեկույց),[1] որի նպատակն էր մեկ անգամ ևս անդրադառնալ հեղափոխական գործընթացներին՝ դրանք դիտարկելով իրավապաշտպանների, ակտիվիստների, իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող լրագրողների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների (այսուհետ՝ իրավապաշտպաններ) իրավունքների պաշտպանության, հեղափոխության օրերին և հետհեղափոխական ժամանակահատվածում նրանց իրավունքները ոտնահարելու և գործունեությունը խոչընդոտելու դեպքերին: Հատուկ զեկույցը անդրադարձել է նաև հետհեղափոխական ժամանակահատվածում արձանագված ինչպես դրական տեղաշարժերին, այնպես էլ առանձին ոլորտներում արձանագրված բացասական միտումներին:

Ի լրումն Հատուկ զեկույցում արված վերլուծությունների ու մշտադիտարկման արդյունքների՝ սույն տարեկան զեկույցն անդրադառնում է հատկապես հետհեղափոխական ժամանակահատվածում մարդու իրավունքների առանձին ոլորտներում արձանագրված առավել բացասական զարգացումներին: Նման իրավիճակ արձանագրվել է հատկապես ԼԳԲՏ մարդկանց խնդիրներով զբաղվող իրավապաշտպանների, ակտիվիստ-կանանց, հանրային մեծ հնչեղություն ունեցող գործերով որպես կասկածյալ կամ մեղադրյալ անցնող անձանց իրավունքների պաշտպանությունը ստանձնած փաստաբանների և բնապահպանների առնչությամբ:

Տարեկան զեկույցը նաև անդրադառնում է առանձին իրավապաշտպանների վերաբերյալ առկա դատական գործերով արձանագրված տեղաշարժերին:

[1] Հատուկ զեկույցն ընգրկում է 2018 թ. մարտի 31-ից մինչև օգոստոսի 17-ն ընկած ժամանակահատվածը. մարտի 31-ին ԱԺ Ելք խմբակցության պատգամավոր Նիկոլ Փաշինյանը քայլարշավ սկսեց՝ ընդդեմ Սերժ Սարգսյանի կառավարման երրորդ ժամկետի, իսկ օգոստոսի 17-ին լրացավ նորընտիր կառավարության գործունեության 100-րդ օրը: Հատուկ զեկույցին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով. https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrh_special_report_2018_hy:

Ուսանողների իրավունքների սահմանափակումները, նրանց նկատմամբ ճնշումներն ու բռնության դեպքերը

Ուսանողների իրավունքներն սահմանափակելու, նրանց նկատմամբ ճնշումներ և բռնություն գործադրելու դեպքերն առավելապես արձանագրվել են հեղափոխության օրերին, ինչը պայմանավորված էր հեղափոխական գործընթացներին ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Ուսանողների նման ակտիվությունը, իրենց իսկ հավաստմամբ, պայմանավորված էր նաև կրթական համակարգում առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Հեղափոխության օրերին ուսանող-ակտիվիստների հիմնական խնդիրը եղել է ուսանողներին հնարավորինս իրազեկելը և բողոքի ակցիաներին նրանց մասնակցությունը համակարգելը, ինչով էլ պայմանավորված՝ ուսանող-ակտիվիստները եղել են ոստիկանների թիրախում՝ ենթարկվելով տարատեսակ ճնշումների: Բացի այդ՝ խոչընդոտվել է հավաքներին մասնակցելու նրանց իրավունքը: Այսպես՝ ապրիլի 17-ին, այսպես կոչված՝ «փողոցները փակելու ակցիաների» ժամանակ ոստիկանները թիրախավորել են ուսանող-ակտիվիստներ Վահան Կոստանյանին ու Դավիթ Պետրոսյանին՝ որպես ակցիաների համակարգողների: Նշված օրը ոստիկաններն Իսահակյանի արձանի տարածքից՝ ոչ երթևեկելի հատվածից, ուսանողներին, այդ թվում Վահանին ու Դավիթին, ուժի կիրառմամբ մտցրել են մեքենաներն ու տարել՝ խախտելով նրանց խաղաղ, առանց զենքի ժողովներ և հանրահավաքներ անցկացնելու իրավունքը: Նախատեսված 3 ժամի փոխարեն ոստիկանական բաժանմունքում ուսանողները պահվել են 9 ժամից ավելի, ինչը, սակայն, չի արտացոլվել կազմված արձանագրություններում: Բերման ենթարկելիս ոստիկանները չեն ներկայացել և չեն նշել ուսանողներին բերման ենթարկելու պատճառները: Նշված օրը բերման են ենթարկվել ընդհանուր թվով 14 ուսանողներ («Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ):

Ուսանող-ակտիվիստների նկատմամբ ճնշումները շարունակվել են նաև ապիլի 17-ից հետո: Հաջորդ օրը՝ ապրիլի 18-ին, ոստիկանները փորձել են ևս մեկ անգամ Դավիթին բերման ենթարկել, բայց չեն հաջողել: Իսկ ավելի ուշ՝ ապրիլի 20-ին, ոստկանությունը հայտարարություն է տարածել՝ նշելով, որ ակցիաների որոշ մասնակիցներ, այդ թվում Վահան Կոստանյանը, ակնհայտորեն նպատակ ունեն բախումներ հրահրել քաղաքացիների և իրենց ծառայողական պարտքը կատարող ոստիկանների միջև: Նշված հայտարարության պատճառով Վահանը ստիպված է եղել մեկ օրով անցնել ընդհատակ: Ըստ Վահանի՝ այդ օրերին իր հեռախոսը գաղտնալսել են, անգամ՝ հետևել իրեն: Իսկ Դավիթ Պետրոսյանը

տարբեր առիթներով նաև բռնության է ենթարկվել թե՛ ոստիկանական բաժանմունքում, թե՛ դրանից դուրս՝ անհայտ անձանց կողմից:[2]

Հոգեբանական ճնշում գործադրելու դեպքեր են գրանցվել կին ուսանող-ակտիվիստների նկատմամբ: Այսպես, ապրիլի 17-ին ոստիկանության բաժին բերման ենթարկվածների մեջ եղել է նաև Գոհարիկ Տիգրանյանը: Ինչպես պատմում է Գոհարիկը, ոստիկանները դիմելով բերման ենթարկված կին ակտիվիստներին՝ ասել են. «Աղջիկ եք, չե՞ք ամաչում»:[3]

Իսկ տնտեսագիտական համալսարանի մոտ գրաֆիտի (որմնանախշ) անելիս քաղաքացիական հագուստով ոստիկանը հետևից մոտեցել է Հայարփի Բաղդասարյանին ու խփել է ձեռքին, կոտրել ու տարել տրաֆարետը: Մեկ այլ դեպքում՝ ապրիլի 12-ին, երբ գրաֆիտի անելուց հետո գնացել է համալսարան՝ տրաֆարետը ձեռքին, համալսարանի աշխատակից Լյովա Առուստամյանը մոտեցել, քաշքշել ու պատռել է տրաֆարետը՝ պատճառաբանելով, թե «փորձում է կանխել համալսարանի տարածքում գրաֆիտի անելու՝ Հայարփիի մտադրությունը»: Նման մտադրություն, ինչպես Հայարփին է նշում, ինքը չի ունեցել: Հայարփիին նույնիսկ վարչական իրավախախտման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել՝ գրաֆիտի անելու համար, սակայն դրան ընթացք չի տրվել:

Ուսանող-ակտիվիստների նկատմամբ նաև վարչական ճնշումներ են կիրառվել, մասնավորապես՝ Հայարփիի ու նրա առավել ակտիվ ընկերների անունները ներառել են համալսարանից հեռացվողների ցուցակում:

Հեղափոխությունից հետո. Ուսանող-ակտիվիստ, «Ռեսթարթ» նախաձեռնության անդամ Դավիթ Պետրոսյանը, ընդգծելով հեղափոխական գործընթացներում ուսանողների ակտիվությունը և նրանց կարևոր դերը, նշում է, որ կրթական համակարգում, այդուհանդերձ, մեծ տեղաշարժեր չեն արձանագրվել: Ընդհակառակը, ուսանող-ակտիվիստի պնդմամբ, ուսանողական ոլորտում առկա հիմնախնդիրներով զբաղվող խմբերի համար, ինչպիսինն է «Ռեսթարթ» նախաձեռնությունը, վատթարացել են գործունեություն իրականացնելու պայմանները: Երևանի պետական համալսարանի վարչակազմը, մասնավորապես, հրաժարվում է նախաձեռնության և, մեծ հաշվով, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցելուց, ինչի հետևանքով, օրինակ, սահմանափակված է նախաձեռնության անդամների՝ լսարաններ մուտք գործելու հնարավորությունը: Մյուս կողմից՝ ինչպես Դավիթն է նշում, ակտիվացել են ուսխորհուրդները, որոնք ուսանողության վրա ազդելու բավական մեծ ռեսուրներ ու հնարավորություններ ունեն: Նշվածը, ըստ Դավիթի, մտահոգիչ է այնքանով, որ ուսխորհուրդների կազմը, բացառությամբ մեկի, գրեթե չի փոփոխվել: Ամփոփելով ուսանողության ներկայիս վիճակը՝ Դավիթ Պետրոսյանը ցավով արձանագրում է, որ սեփական իրավունքները պաշտպանելու և կրթական համակարգում բարեփոխումներ իրականացնելու հարցում ուսանողներն այլևս ակտիվ չեն:

---

[2] Մանրամասները տես ստորև՝ «Փաստաբանների աշխատանքը խոչընդոտելու դեպքերը» հատվածում:

[3] Ոստիկաններին հատկապես զայրացրել է այն, որ ողջիկներից ոմանք հրաժարվել են ոստիկաններին հայտնել իրենց անունները:

Կանանց իրավունքների պաշտպաններին թիրախավորելու և նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելու դեպքերը

Կանանց իրավունքների պաշտպաններին թիրախավորելու, նրանց նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու դեպքեր արձանագրվել են հեղափոխության ընթացքում՝ այդ գործընթացներում ակտիվորեն ներգրավված կանանց նկատմամբ: Հետհեղափոխական ժամանակաշրջանում արդեն նկատվել է հանրային կյանքում ակտիվ կանանց նկատմամբ անհանդուրժողականության, ինչպես նաև նրանց թիրախավորելու դեպքերի աճ՝ հատկապես առցանց տիրույթում:

Կին իրավապաշտպաններն ու ակտիվիստները բավական ակտիվ են եղել հեղափոխության ընթացքում, ինչը դրսևորվել է տարբեր ձևերով՝ փողոցներ փակելով, հավաքներ, երթեր և այլ ակցիաներ իրականացնելով: Այսպես օրինակ՝ նրանք կազմակերպել են «կանանց երթ», որի ընթացքում ֆեմինիստական կարգախոսներ են վանկարկել, ֆեմինիստական պաստառներ բարձրացրել: Կին-ակտիվիստները նաև մեծապես օգտագործել են սոցիալական ցանցերը. նրանց կողմից ստեղծված ֆեյսբուքյան զրուցարանը՝ «Աղջիկնոց»-ը, մասնավորապես, արդյունավետ հարթակ է եղել քննարկումներ կազմակերպելու, անելիքները պլանավորելու, կարգախոսներ մշակելու համար:

Խոսելով հեղափոխության օրերին կին ակտիվիստների դերի մասին՝ Լարա Ահարոնեանը, օրինակ, նշում է, որ սկզբնական շրջանում ակցիաներին մասնակցել է որպես դիտորդ՝ նպատակ ունենալով պարզապես արձանագրելու ակցիաների ու հանրահավաքների ժամանակ բռնության դեպքերը, հատկապես՝ կանանց նկատմամբ: Հետո արդեն սկսել է ակցիաներին մասնակցել որպես ակտիվիստ: Այս առումով բավական հետաքրքիր նկատառում է անում մեր հարցազրույցներին մասնակցած կանանցից մեկը՝ նշելով, որ այդ օրերին դժվար էր տարբերակել «ակտիվիստին»՝ «ոչ-ակտիվիստից», իսկ ինքն անձամբ ցույցերին մասնակցել է ոչ թե որպես «ակտիվիստ» , այլ՝ «ժողովրդի ներկայացուցիչ»:

Այդ օրերին նաև կին-ակտիվիստների նկատմամբ խտրական վերաբերմունք է կիրառվել, ինչպես նաև՝ հոգեբանական ճնշում գործադրվել՝ նպատակ ունենալով սահմանափակել հանրահավաքներին և այլ ակցիաներին նրանց մասնակցելու հնարավորությունը: Նման մի դեպք է մտաբերում Արփի Բալյանը, երբ Աբովյան քաղաքից նախատեսվող ավտոերթի ժամանակ, օգտվելով կանանց փոքրաթիվ լինելու հանգամանքից, մի քանի տղամարդիկ փորձել են հոգեբանորեն ճնշել կանանց, որպեսզի նրանք չմասնակցեն ակցիային: Մեկ այլ դեպք էլ Լարա Ահարոնեանն է պատմում, երբ իրեն ոստիկանության բաժին տեղափոխելուց հետո ասել են. «Դու տանը գործ չունե՞ս, երեխաներ չունե՞ս, որ փողոց ես փակում»:

Ոստիկանության կողմից եղել են նաև կանանց արտաքինի վերաբերյալ ոչ պարկեշտ մեկնաբանություններ անելու դեպքեր: Մասնավորապես՝ մեր հարցազրույցներին մասնակցած կանանցից մեկին բերման ենթարկելու դեպքերից մեկի ժամանակ մեքենայի մեջ մի մայոր հարցրել է՝ «Հիմա դու աղջի՞կ ես, թե՞ տղա»՝ ակնարկելով կնոջ կարճ սանրվածքը: Դրան ի պատասխան՝ կինն ասել է՝ «փորձիր գուշակել երեք տարբերակից», մայորը պատասխանել է՝ «Լեզվիդ ես տալիս» ու նրան փակել խցում:

Կին-ակտիվիստները խտրական վերաբերմունքի են արժանացել նաև համաքաղաքացիների կողմից՝ իբր «կանանց ոչ հարիր» վարք դրսևորելու պատճառով: Այսպես, ինչպես նրանցից մեկն է պատմում, երբ, հետևելով տղամարդկանց օրինակին, իրենք ևս մի քանի կանանցով որոշել են «բլոտ խաղալ», մի խումբ քաղաքացիներ մոտեցել ու նրանց խնդրել են չխաղալ՝ ասելով, թե «դա տգեղ է»: Իսկ «ճանապարհները փակելու ակցիաների» ժամանակ էլ, ըստ հարցազրույց տված կանանցից մեկի, նույնիսկ երբ մեքենայի ճանապարհը փակողները կանայք են եղել, վարորդներն իրենց դժգոհություն-պահանջներն ուղղել են տեղում գտնվող տղամարդկանց՝ անտեսելով կանանց: Արփի Բալյանի բնորոշմամբ էլ՝ կանայք, փաստացի, չեն ընկալվել որպես «պայքարող», իսկ հարթակից հնչող կանանց ելույթները սակավ լինելուց բացի, նաև առանձնապես չեն ողջունվել հանրության կողմից:

Այդ օրերին, ըստ Լարա Ահարոնեանի, նաև արձանագրվել են նաև սեռական բռնության դեպքեր. մասնավորապես՝ երկու կին դիմել են Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն՝ սեռական ոտնձգության ենթարկվելու պատճառով:

Հեղափոխությունից հետո. Հեղափոխությունից հետո կին ակտիվիստների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումները շարունակվել են առցանց տիրույթում: Դրան ավելացել է նաև նրանց վերաբերյալ ապատեղեկատվության տարածումը, ինչը կին ակտիվիստներին թիրախավորելուց բացի նպատակ է ունեցել վարկաբեկելու Նիկոլ Փաշինյանի շարժումը: Մեր հարցազրույցներին մասնակցած կանանցից մեկի խոսքով՝ կանանց թիրախավորման առումով «վտանգն այժմ ավելի մեծ է», քան ապրիլ-մայիս ամիսներին. «մանիպուլյացիոն մեխանիզմների կիրառման արդյունքում հոմոֆոբիայի ու կնատյացության ալիք է նկատվում, ինչն իր հերթին հանգեցնում է թիրախավորման արդեն առցանց հարթակում»:

Ասյա Խաչատրյանին թիրախավորելու դեպքերը

2018 թ. ընթացքում արձանագրվել են կին-ակտիվիստ Ասյա Խաչատրյանին թիրախավորելու մի քանի դեպքեր՝ նրա կին լինելու և տարբերվելու պատճառով: Առաջին դեպքը տեղի է ունեցել 2018 թ. հունվար-փետրվար ամիսներին Արցախում: Ինչպես Ասյան է նշում, ոստիկանները մի քանի օր շարունակ հետևել են իրեն, ապա փետրվարի 3-ին բերման ենթարկել ոստիկանական բաժանմունք: Ասյայի պնդմամբ, բաժանմունքում իր նկատմամբ գործադրվել է հոգեբանական և ֆիզիկական բռնություն: Ինչպես պարզվել է քննության ընթացքում, Ասյան

ոստիկանության ուշադրության կենտրոնում հայտնվել է կապույտ մազեր ունենալու ու ծխելու պատճառով: Ասյայի թիրախավորումն ավելի ուժգնորեն շարունակվել է առցանց տիրույթում՝ դեպքի՝ ավելի մեծ հանրային արձագանք ստանալուց հետո: Նշված դեպքի առթիվ թեպետ Արցախի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից քրեական գործ է հարուցվել, այն, սակայն, կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով: Որոշումը բողոքարկվել է, բողոքարկման արդյունքները հարցազրույց տալու պահին դեռևս հայտնի չէին: Նշված դեպքի հետ կապված՝ Ասյան իր հարցազրույցում նշում է նաև, որ զրպարտության համար քաղաքացիական հայց է ներկայացրել քաղաքական գործիչ Գառնիկ Իսագույլանի դեմ, որը նշված օրերին հայտարարել էր, թե Ասյան, իբր, Բաքվում է եղել:

Այնուհետև, Ասյա Խաչատրյանն առցանց տիրույթում թիրախավորվել է սոցիալական ցանցերից մեկում ադրբեջանցի տղայի հետ նրա հրապարակած լուսանկարի պատճառով: Այս դեպքի առթիվ Ասյան կրկին ներկայացվել է որպես ազգի դավաճան, ուժգնացել են նրա՝ ադրբեջանական լրտես լինելու մասին քննարկումները:

ՁԼՄ-ների դերը և լրագրողների աշխատանքը խոչընդոտելու դեպքերը

Հեղափոխության ընթացքում լրագրողները մեծ դեր են խաղացել տեղեկատվության ազատության ապահովման գործում և այդպիսով իրենց ներդրումն ունեցել հեղափոխության հաղթանակում: Թեև լրագրողները որոշակիորեն կաշկանդված են եղել նախկին իշխանությունների «հնարավոր գործողություններից» (լրագրող), դա, սակայն, չի նսեմացնում հեղափոխության օրերին լրագրողների կատարած աշխատանքի կարևորությունը:

Հաշվետու ժամանակահատվածում լրագրողների աշխատանքի արդյունավետությանը մեծապես նպաստել է «քաղաքացի-լրագրող համագործակցության» գործոնը: Օրինակ, քաղաքացիները պարբերաբար հանրապետության տարբեր վայրերից լրատվամիջոցներին տեսանյութեր են տրամադրել, որպեսզի նրանք դրանք հրապարակեն, դրանց հիման վրա լուսաբանեն դեպքերը: Ըստ լրագրողներից մեկի՝ սա կարևոր հանգամանք է, քանի որ ակցիաների բազմաթիվության պատճառով լրագրողները ֆիզիկապես ի վիճակի չէին ներկա գտնվելու իրադարձությունների բոլոր կարևոր կետերում և հավասարապես լուսաբանելու դրանք: Այդուհանդերձ, վերոնշյալ համագործակցությունը «ոչ թե լրագրողներին վստահելու արդյունք էր, այլ առավելապես Նիկոլ Փաշինյանին և հեղափոխությանն օժանդակելու միջոց (լրագրող):

Հեղափոխության օրերին առավելապես կարևոր է եղել ոչ ավանդական՝ առցանց մեդիայի դերը, որն ավելի շատ վստահություն է վայելել հասարակության շրջանում հաշվետու ժամանակահատվածում, քան ավանդական մեդիան: Ինչպես լրագրողներից մեկն է նշում, մարդիկ այդ օրերին ավելի շատ վստահել են ինտերնետային «ուղիղ եթերներին»: «Կարող ենք ասել, որ ի վերջո ինտերնետը հաղթեց, հեռուստատեսությունը՝ պարտվեց»,- ավելացնում է նույն լրագրողը: Վերոնշյալը պայմանավորված է եղել մասնավորապես այն հանգամանքով, որ Նիկոլ Փաշինյանն անձամբ ֆեյսբուքյան իր էջը, այդ թվում՝ ուղիղ եթերների միջոցով, լայնորեն օգտագործել է հանրությանը տեղեկատվություն փոխանցելու, երթերը և ցույցերը կազմակերպելու ու համակարգելու համար:

Այդ օրերին լրագրողների գործունեությունը խոչընդոտելու և սահմանափակելու մի շարք դեպքեր են արձանագրվել: Մասնավորապես՝ սահմանափակվել են լրագրողներ Տիրայր Մուրադյանի, Նաիրա Բուլղադարյանի, Արտակ Խուլյանի և այլոց գործունեությունը: Թեպետ դժվար է ասել, որ նշված բոլոր դեպքերը ուղղորդված են եղել և (կամ) նրանք թիրախավորված են եղել որպես լրագրողներ (Գեղամ Վարդանյան, 2018 թ. հոկտեմբերի 22):

Այսպես, լրագրող Տիրայր Մուրադյանի գործունեությունը խոչընդոտելու երկու դեպք է գրանցվել: Առաջինի ժամանակ լրագրողը «խնդիր է ունեցել» քաղաքացիական հագուստով անձանց հետ: Իսկ երկրորդ դեպքում՝ նրան բերման ենթարկելու փորձ են արել Կոտայքի մարզի ոստիկանության բաժնի պետի հրամանով, սակայն երբ ոստիկաններն իմացել են, որ նա լրագրող է, իջեցրել են մեքենայից: Նշված երկու դեպքերի առիթով էլ հարուցվել են քրեական գործեր՝ լրագրողի գործունեությանը միջամտելու փաստի առնչությամբ: Նշված գործերից առաջինով արդեն իսկ առկա է դատական ակտ, որի մանրամասները ներկայացվում են ստորև:

Հեղափոխության օրերին լրագրողներն իրենց մասնագիտական պարտքը կատարել են նաև վտանգավոր իրավիճակներում: Լրագրողների համար վտանգավոր իրավիճակներ ստեղծվել են մասնավորապես Երևանի Արցախի պողոտայից Նիկոլ Փաշինյանին «բերման ենթարկելու» ժամանակ առաջացած իրարանցման, ինչպես նաև «փակված» փողոցներում ոստիկանների, «սադրիչների», փողոցների արգելքները հաղթահարել ցանկացող քաղաքացիների գործողությունների պատճառով (լրագրող): Ընդհանուր առմամբ՝ բողոքի ակցիաների զանգվածային և ապակենտրոնացված լինելու պատճառով ոստիկանները ֆիզիկապես հնարավորություն չեն ունեցել «գործելու» բոլոր լրագրողների դեմ, դրանով իսկ այդ օրերի ակցիաները տարբերվել են նմանատիպ այլ ակցիաներից, ինչպես օրինակ՝ «Էլեկտրիկ Երևանից (լրագրող):

Հեղափոխությունից հետո. Հեղափոխությունիից հետո գործող իշխանությունների հասցեին հնչող քննադատությունների հանդեպ անհանդուրժողականությունը հանրության շրջանում աճել է: Ուստիև լրագրողները կարևոր են համարում, որ լրատվամիջոցներն ու լրագրողներն ինքնագրաքննությամբ չզբաղվեն՝ տեղի տալով քաղաքացիների քննադատություններին: Ըստ լրագրողներից մեկի՝ ինքնագրաքննությանը նպաստող հանգամանք է նաև այն, որ մեդիան ընդհանուր առմամբ դրական է տրամադրված ներկայիս իշխանությունների հանդեպ:

Լրատվական դաշտում նաև դրական տեղաշարժեր են նկատվել, մասնավորապես՝ «խմբագրական ազատությունը» հատկապես հեռարձակվող լրատվամիջոցների պարագայում աճել է (լրագրող): Բացի այդ, լրատվական դաշտը թևակոխել է «փոխակերպումների փուլ», և, ըստ լրագրողների, հարմար առիթ է ստեղծվել ոլորտում կատարելու օրենսդրական փոփոխություններ՝ այն ավելի թափանցիկ դարձնելու (օրինակ, լրատվամիջոցների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հանրայնացնելով) և ոլորտում մենաշնորհների առկայությունը բացառելու նպատակով:

Տիրայր Մուրադյանի դատական գործով զարգացումները

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Մ. Մարտիրոսյանի, 13.12.2018 թ. վճռով Սուրեն և Արեգ Թորոսյաններին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով (լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը) նախատեսված

հանցանքում և դատապարտել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Ըստ քրեական գործի հանգամանքների՝ Սուրեն և Արեգ Թորոսյանները, հանդիսանալով ՀՀ ոստիկանության պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով խոչընդոտել են զանգվածային լրատվության միջոց հանդիսացող «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, լրագրող Տիրայր Մուրադի Մուրադյանի մասնագիտական օրինական գործունեությանը:

Հատկանշական է, որ քրեական գործով հաստատված է համարվել հանգամանքն առ այն, որ Տիրայր Մուրադյանը եղել է լրագրողական վկայականը (բեյջ) պարանոցից ակնհայտ տեսանելի փակցրած վիճակում: Նշված անձինք, անտեսելով լրագրող լինելու մասին նրա հավաստիացումները և լրագրող հանդիսանալու հանգամանքը հաստատող վկայականի առկայությունը, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով, ոտքերով և ձեռքերով հարվածներ են հասցրել Տ. Մուրադյանի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ամբաստանյալների կողմից դատավճիռը բողոքարկվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարան, որտեղ գործի քննությունը զեկույցի կազմման պահին շարունակվում է:[4]

[4] «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգ:

Փաստաբանների աշխատանքը խոչընդոտելու դեպքերը[5]

Հաշվետու ժամանակահատվածում խոչընդոտվել են նաև ոստիկանության բաժանմունք բերված քաղաքացիների պաշտպանությունը կամավոր հիմունքներով ստանձնած փաստաբանների գործունեությունը: Օրինակ, 2018 թվականի ապրիլի 17-ին փաստաբան Հայկուհի Հարությունյանին ոստիկանության Նոր-Նորքի բաժնում մոտ 40 րոպե թույլ չեն տվել ներս մտնել ոստիկանության բաժին: Միայն Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խմբի միջամտությունից հետո է փաստաբանը կարողացել մուտք գործել շենք: Նույն ոստիկանության բաժնում մեկ այլ փաստաբան՝ Արաքս Մելքոնյանին և նրա պաշտպանյալ Դավիթ Պետրոսյանին արգելել են դուրս գալ ոստիկանության բաժնից: Այնուհետև, երբ Դավիթ Պետրոսյանը փորձել է լուսամուտից տեղեկություններ տրամադրել դրսում սպասող լրագողներին, ոստիկանության աշխատակիցները հարձակվել են նրա վրա, բռնի ուժով քաշքշել: Իսկ 2018 թվականի ապրիլի 18-ին ոստիկանության Մասիվի բաժնում բերման ենթարկվածները պահվել են ոստիկանության աշխատակիցների սենյակներում, որտեղ անհրաժեշտ թվով աթոռներ չեն եղել, և բերման ենթարկվածները նստելու հնարավորություն չեն ունեցել:

Ոստիկանության Նոր-Նորքի բաժնում փաստաբան/ները իր աշխատանքը ստիպված է եղել կատարել անբարենպաստ և ճնշող միջավայրում: Օրինակ, ոստիկանության աշխատակցի սենյակում վարչական վարույթ կազմելու աշխատանքն իրականացվել է ոչ թե անհատապես, այլ միաժամանակ 3-5 բերման ենթարկված անձի մասնակցությամբ: Իսկ երբ փաստաբանը խնդրել է ոստիկանության աշխատակցուհուն բացել լուսամուտը, վերջինս պատասխանել է. «Սա իմ աշխատասենյակն է, ես կանեմ այն, ինչ ես եմ նպատակահարմար գտնում»: 2018 թվականի ապրիլի 19-ին էլ ոստիկանության Կենտրոն բաժնում հրաժարվել են արձանագրել Դավիթ Պետասյանի մարմնական վնասվածքները: Այնուհետև, խոչընդոտվել է փաստաբան Արաքս Մելքոնյանի կողմից Դավիթ Պետրոսյանի մարմնական վնասվածքները արձանագրելու գործընթացը:

Իսկ 2018 թվականի ապրիլի 19-ին ժամը 16:50-ի սահմաններում մի խումբ անձինք (մոտ 20 մարդ) հարձակվել են փաստաբան Արաքս Մելքոնյանի և նրա պաշտպանյալ Դավիթ Պետրոսյանի վրա և նրանց ծեծի ենթարկել Սրբ. Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցի բակում:

Փաստաբանների թիրախավորումները հանրային հնչեղություն ունեցող գործերով

Հանրային նշանակություն ունեցող մի շարք գործերով արձանագրվել է փաստաբանների թիրախավորման դեպքեր, այդ թվում՝ առցանց տիրույթում: Այսպես՝ հանրության համար զգայուն գործերով առանձին անձանց պաշտպանությունը ստանձնած փաստաբանները,

[5] Ավելի մանրամասն տե՛ս «Հաշվետվություն՝ 2018 թվականի ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների մասին», «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն, 2018, http://prwb.am/new/hy/2018/04/20/2018-13-20/:

մասնավորապես՝ փաստաբաններ Հայկ Ալումյան, Արսեն Մկրտչյան և այլն, նույնականացվելով իրենց պաշտպանյալների հետ՝ ենթարկվել են հետապնդումների, եղել են նրանց պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելուն ուղղված, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության նկատմամբ սպառնալիք պարունակող արտահայտություններ: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառը փաստաբանի և նրա պաշտպանյալի նույնացումն է: Ըստ «Հանուն իրավունքների» հասարակական կազմակերպության՝ փաստաբանների նկատմամբ արձանագրվել է նման 7 դեպք:

Փաստաբանների պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող, սպառնալիք պարունակող արտահայտություններին վերջ տալու կոչով հանդես են եկել տարբեր պատկան մարմիններ, այդ թվում՝ ՀՀ վարչապետը, Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ փաստաբանների պալատը, մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ ու անհատ իրավապաշտպաններ: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մասնավորապես, խոսելով փաստաբաններին իրենց պաշտպանյալների հետ նույնացնելու անթույլատրելիության մասին, ընդգծել է փաստաբանների դերի կարևորությունը արդարադատության կայացման գործում:[6]

Փաստաբանների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով անգամ շրջանառության մեջ է դրվել օրենքի նախագիծ, որով նախատեսվում է քրեականացնել փաստաբանին մասնագիտական գործունեության իրականացման հետ կապված վիրավորելը և (կամ) զրպարտելը: Նման օրենքի ընդունման հիմնավորումն այն է, որ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ առկա զուտ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար, իսկ քրեական պատասխանատվություն նախատեսելը կարող էր պրևենտիվ (կանխիչ) նշանակություն ունենալ:[7] Օրենքի նախագիծը սույն հաշվետվությունը կազմելու պահին դեռևս չի ընդունվել:

[6] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքը փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ (տեսանյութ). ՀՀ փաստաբանների պալատ, 15.01.2019 թ., http://www.advocates.am/news/view/2281.html:

[7] Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րոդ հոդվածի 1-ին մասով նման պաշտպանություն արդեն իսկ տրամադրվել է դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին: Նախագծով նախատեսվում է նման պաշտպանություն տրամադրել նաև փաստաբաններին:

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանների իրավունքների սահմանափակումներն ու գործունեությունը խոչընդոտելու դեպքերը

Ապրիլ-մայիս ամիսներին Երևանում տեղի ունեցած հեղափոխական շարժման ընթացքում ԼԳԲՏ ցուցարարները ոստիկանության կողմից արժանացել են տարբերակված, կանխակալ վերաբերմունքի: Մասնավորապես, դեպքեր են եղել, երբ նրանց բերման են ենթարկել իրենց ենթադրյալ սեռական կողմնորոշման պատճառով: Ինչպես պատմել է գիտնական, ակտիվիստ Վարդան Համբարձումյանը, երբ իրենք մի խումբ մարդկանցով փողոց են փակել, ոստիկանները միայն իրեն են բերման ենթարկել: Ցուցարարներից մեկը նույնիսկ հետաքրքրվել է՝ ինչու են միայն նրան (Վարդանին) տանում՝ առաջարկելով իրեն էլ բերման ենթարկել, ոստիկանները պատասխանել են՝ «դու նորմալ տղա ես, դրա համար քեզ չենք տանում, իսկ ինքը... չասենք՝ ինչ ա, ստեղ լիքը աղջիկ կա»: Վարդանի խոսքով՝ մեքենայում իրեն ծեծել են, թքել վրան՝ ասելով, թե այդպիսով «փչացնում են իրեն»:

Եղել են դեպքեր, երբ ոստիկանները մարդկանց արտաքինի վերաբերյալ ոչ պատշաճ մեկնաբանություններ են արել: Մասնավորապես Դիանա Կարապետյանը պատմել է, որ ոստիկանների հետ վիճաբանության ժամանակ, իրեն ասել են՝ «գնա, պիրսինգդ հանի՝ նոր խոսա», իսկ մեկ այլ դեպքում՝ ոստիկանը հետաքրքրվել է՝ արդյոք Դիանան աղջիկ է, թե՞ տղա:

Հասարակության կողմից ևս ԼԳԲՏ ցուցարները վատ վերաբերմունքի են արժանացել: Ցուցարար Մխիթար Երիցյանն օրինակ պատմել է, որ ցուցարարները տեսնելով իր տրանսգենդեր ընկերոջն՝ ասել են. «Վախ, հորս արև, էս ո՞վ ա: Սրանք գնում են սաղ օր ստեղ-ընդեղ, պատերի տակ ինչ ասես՝ անում են, էսօր էկել են ստեղ»: Այդուհանդերձ, ԼԳԲՏ ակտիվիստների խոսքով՝ հիմնականում համերաշխ մթնոլորտ է տիրել:

Հեղափոխությունից հետո. Իշխանափոխությունից հետո որոշ պառլամենտական ուժեր, մասնավորապես՝ Հանրապետական խմբակցությունը, Ծառուկյան դաշինքը, ինչպես նաև հոգևորականներն ու հասարակության «հակագեյ» տրամադրված որոշ հատվածներ ակտիվորեն շահարկել են ԼԳԲՏ մարդկանց թեման՝ այն օգտագործելով նոր իշխանությունների դեմ: Առանձին ակտիվությամբ աչքի են ընկել Հանրապետական կուսակցությունից ՀՀ ազգային ժողովի այդ ժամանակվա փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը: Նա, մասնավորապես, հանդես է եկել երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ, որով նախատեսվում էր արգելել «սեռական փոքրամասնությունների» քարոզը անչափահասների շրջանում: Իսկ ահա «Ծառուկյան» դաշինքից պատգամավոր, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դասախոս Գևորգ Պետրոսյանն էլ ատելության խոսք ու հանցագործության կոչ պարունակող մի քանի գրառումներ է արել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, բացի այդ նման հայտարարություններով հանդես է եկել զանգվածային լրատվության միջոցներով: Նա, մասնավորապես, հորդորել է «չհանդուրժել և վտարել ԼԳԲՏ անձանց Հայաստանից»:

Շուռնուխ գյուղում ԼԳԲՏ ակտիվիստների նկատմամբ բռնության դեպքը

Սյունիքի մարզի Շուրնուխ գյուղի բնակիչ Հայկ Հակոբյանը 2018 թ. օգոստոսի 2-ին իր ութ ընկերներին, որոնց թվում եղել են նաև ԼԳԲՏ ակտիվիստներ, հյուրընկալել է իր տանը: Մի խումբ համագյուղացիներ և տարածքի այլ բնակիչներ՝ 30 հոգուց ավել, մոտենալով Հայկի տանը և նրան դուրս կանչելով տնից, նախ պահանջել են, որ հյուրերը հեռանան գյուղից, ապա Հայկի և մյուսների նկատմամբ դիմել են բռնի գործողությունների՝ հարվածել են ոտքերով, ձեռքերով, քարեր են նետել նրանց ուղղությամբ՝ բղավելով՝ «Գոմիկներ, հեռացե՛ք», «Դուք թուրք եք», նրանց հասցեին հնչեցրել են հայհոյախառն այլ արտահայտություններ՝ կապված Հայկի և նրա հյուրերի իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ: Բռնության ենթարկված նշված անձինք փորձել են հեռանալ գյուղից՝ այդ ընթացքում ևս շարունակվելով ենթարկվել բռնության:

Հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ քաղաքական ու հասարակական գործիչներ, իրավապաշտպաններ, արվեստագետներ, փաստաբաններ, լրագրողներներ և հոգևորականներ, հանդես են եկել նշված բռնարարքն արդարացնող հայտարարություններով, ավելին՝ ի պաշտպանություն բռնություն գործած անձանց կազմակերպվեցին տարբեր ակցիաներ՝ ավտոերթ և այլն:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գորիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի՝ ծեծի հատկանիշներով թեպետ քրեական գործ հարուցվեց, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից նոյեմբերի 28-ին կայացված որոշմամբ համաներում կիրառվեց՝ կարճելով քրեական գործով վարույթը: Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկվել է տուժողների իրավունքների խախտման հիմքով, որի արդյունքները սույն տարեկան զեկույցը կազմելու պահին դեռևս հայտնի չեն:

Միաժամանակ, ինչպես արձանագրվել է ոլորտային «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից, նշվածը՝ արարքը թեթև հանցագործությամբ որակելը, ապա՝ համաներմամբ կարճելը, հնարավոր եղավ ՀՀ քրեական օրենսգրքում ատելության հիմքով հանցագործության համար հատուկ կարգավորումների բացակայության պատճառով, որպիսի պայմաններում որոշակի խմբի նկատմամբ անհանդուրժողականությամբ, թշնամանքով պայմանավորված արարքները համապատասխան քրեաիրավական որակում չեն ստանում:

ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների պաշտպանների գործունեության պայմանները

Հեղափոխության ընթացքում և դրանից հետո ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների պաշտպանների իրավունքների սահմանափակման ու գործունեության խոչընդոտման դեպքեր չեն արձանագրվել («Իրական աշխարհ, Իրական մարդիկ» ՀԿ): Ընդհակառակը՝ որոշ դրական փոփոխություններ են նկատվել, մասնավորապես՝ նոր ձևավորված կառավարության կազմում ոլորտին քաջատեղյակ մարդիկ են նշանակվել: Այսպես, նորանշանակ նախարար Արսեն Թորոսյանը աշխատել է Իրական աշխարհ, Իրական մարդիկ ՀԿ-ում, իսկ փոխնախարար Լենա Նանուշյանը՝ UNAIDS-ում, և երկուսն էլ քաջատեղյակ են ոլորտի խնդիրներին: Ոլորտի խնդիրները քննարկելու նպատակով նաև առաջին անգամ հանդիպում է կազմակերպվել փոխնախարարի հետ, որի ընթացքում քննարկվել է ՄԻԱՎ-ի հետ առնչվող ծառայությունների ապակենտրոնացման անհրաժեշտության հարցը: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ համագործակցությունը պետական կառույցների հետ նոր թափ է ստացել: Կարևոր է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի (ՄԻԱՎ հարուցիչով վարակելը) առնչությամբ UNAIDS-ի առաջարկությունների ընդգրկումն օրենսդրական փոփոխությունների փաթեթում, որի ընդունման դեպքում նշված արարքն ապաքրեականացվելու է:

Բնապահպանների նկատմամբ ճնշումները և թիրախավորելու դեպքերը

Հեղափոխական գործընթացներին մասնակցել են նաև բնապահպան-ակտիվիստները: Այդ օրերին եղել են նրանց գործունեությանը խոչընդոտելու, իսկ կին բնապահպանների պարագայում՝ նաև թիրախավորման դեպքեր: Ինչպես նշում է բնապահպաններից մեկը, իր պայքարի ողջ ընթացքում իր ծանոթների ու ընկերների միջոցով իրեն հաճախ են «խորհուրդ տվել» դադարեցնել գործունեությունը: Մեկ այլ բնապահպանի դեպքում էլ, ինչպես ինքն է նշում, ֆեյսբուքյան կեղծ էջերի միջոցով Ամուլսարը շահագործող «Լիդիան» ընկերության կողմնակիցները բազմիցս անձնական ու սեռական բնույթի վիրավորանքներ են հրապարակել իր հասցեին՝ նպատակ ունենալով «կոտրել իրեն»: Նշված անձանց բացահայտելու և պատասխանատվության կանչելու նպատակով բնապահպանը դիմել է ոստիկանություն, բայց ընդհանուր առմամբ այդ գրառումներին լուրջ չի վերաբերվում՝ հասկանալով դրանց իրական նպատակը:

Բնապահպաններից մեկի խոսքով՝ «Լիդիան» ընկերության կողմից նաև բազմիցս շահարկվել է փաստը, որ տեղի բնակիչների հետ Ամուլսարի մոտ հերթապահում են նաև կանայք՝ այդկերպ փորձելով կոնֆլիկտ հրահրել բնակիչների ու ակտիվիստների միջև:

Հեղափոխությունից հետո. Առցանց հարթակում հեղափոխությունից հետո բնապահպան-ակտիվիստներին թիրախավորելու դեպքերը շատացել են: Այսպես, մասնավորապես «պատվիրված» հրապարկումների, ինչպես նաև սոցիալական ցանցերում կեղծ էջերի միջոցով բնապահպան-ակտիվիստների վերաբերյալ ապատեղեկատվություն է տարածվում՝ նպատակ ունենալով թուլացնել պայքարը (բնապահպան): Այդուհանդերձ, հեղափոխությունն իր հետ նաև դրական փոփոխություններ է բերել: Հեղափոխությունից հետո, օրինակ, Ամուլսարի պաշտպանության գործում տեղացիների ներգրավվածությունը մեծացել է, ինչը կարելի է կապել հեղափոխության հետ. նախկինում տեղացիները վախենում էին դուրս գալ և պայքարել իրենց իրավունքների համար, իսկ այժմ ավելի համարձակ են (բնապահպան):

Ամուլսարի պաշպանության գործում տեղացիների ակտիվ մասնակցությունն ու ակտիվիստների հետ համագործակցությունը, ըստ բնապահպաններից մեկի, շատ կարևոր է, քանի որ առանձին մղվող պայքարը, գուցեև, ցանկալի արդյունք չտար:

Բնապահպանները Լիդիան Արմենիայի հետ դատական գործերով

Բնապահպան Թեհմինե Ենոքյանը, խոսելով 2018 թվականի բնապահպանական իրադարձությունների վերաբերյալ, նշել է, որ հիմնական գործողությունները տեղի են ունեցել Ամուլսարի շուրջ: Հեղափոխության օրերին բնապահպանները հաճախ են «մեղադրվել» հեղափոխական պայքարը հիմնական ուղուց շեղելու մեջ. իրենց հորդորել են սպասել մինչև հեղափոխությունը կավարտվի: Այդուհանդերձ, այդ ընթացքում էլ եղել որոշ կարևոր զարգացումներ: Մասնավորապես՝ Լիդիան Արմենիայի անփույթ աշխատանքի պատճառով Գնդեվազի ջրային համակարգերի վնասումը տեղացիների բողոքի ալիք է առաջ բերել. ի պատասխան դրան՝ տեղացիները որոշ ժամանակով փակել են Ամուլսար տանող ճանապարհները: Անցումային կառավարությունը թեպետ «խոստացել» էր վերջնական լուծումտալշինարարականգործընթացներումտեղգտածանհամապատասխանություններին ու պատասխանատու հանքարդյունաբերությանը հակասող գործողություններին, սակայն այդ ուղղությամբ որևէ քայլ այդպես էլ չի ձեռնարկվել: Արդյունքում՝ 2018 թ. հունիսի 22-ից սկսած ճանապարհները վերջնականապես փակվել են տեղացիների կողմից:

Խոսելով Լիդիան Արմենիայի կողմից գործադրվող ճնշումների մասին՝ Թեհմինեն նշում է, որ ընկերությունը բազմիցս է «սպառնացել», թե արբիտրաժային դատարան կդիմի, սակայն որևէ քայլ այդ ուղղությամբ չի ձեռնարկվել: Թեհիմեն նշեց նաև, որ հարցազրույց տալու պահին մի շարք այլ գործեր են քննվում՝ թե՛ քրեական և թե՛ քաղաքացիական: Դրանցից մեկը, մասնավորապես, կապված է օգոստոսի 26-27-ը տեղի ունեցած իրադարձությունների հետ, երբ Լիդիան Արմենիայի աշխատակիցները, փակելով ճանապարհները, տեղացիների հետ բախումներ են հրահրել և սադրանքի ենթարկել նրանց: Ըստ Թեհմինեի՝ տեղացիների դեմ կիռարվել է նաև գազանման նյութ: Նշված դեպքի առթիվ իր հաղորդման հիմա վրա հարուցվել է քրեական գործ, որով ինքը հարցաքննվել է որպես վկա:

Բնապահպանի հաղորդման վրա մեկ այլ քրեական գործ է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը: Նշված քրեական գործով Թեհմինեն հոկտեմբերի 6-ին ճանաչվել է տուժող և հարցաքննվել է:

Թեհմինեն, որպես բնապահպանների նկատմամբ ճնշման միջոց նշում է նաև իր և այլ բնապահպանների դեմ զրպարտության համար Լիդիան Արմենիայի ներկայացրած քաղաքացիական հայցերը՝ ընդհանուր թվով ութ, որոնց քննությունը հարցազրույց տալու պահին շարունակվում էր:

Խոսելով հետագա հնարավոր զարգացումներից՝ Թեհմինեն նշեց, որ մեկ բան հաստատ է. տեղացիները պատրաստակամ են մինչև վերջ պայքարել և թույլ չտալ որպեսզի Ամուլսարը շահագործվի որպես հանք: Եվ չնայած սոցիալական ցանցերում մանիպուլյացիոն նյութերի ակտիվացմանը՝ իրենք՝ բնապահպանները ևս պատրաստակամ են իրենց պայքարը հասցնել ավարտին:

Խաղաղաշինական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու անհատների նկատմամբ ճնշումները

Բանակի, պատերազմի ու խաղաղության թեմաները երկրում տեղի ունեցող բոլոր կարևոր գործընթացների ժամանակ մշտապես շահարկվել են նախկին իշխանությունների կողմից՝ այդկերպ փորձելով հասարակության լայն զանգվածներին հեռու պահել այդ գործընթացներին ակտիվորեն մասնակցելուց: Նման փորձեր արվել են նաև հեղափոխության օրերին, սակայն ինչպես նշում է ակտիվիստներից մեկը, այս անգամ մարդիկ ավելի զգույշ են վարվել տարածվող ինֆորմացիայի հետ. նախկին իշխանությունների կողմից տարածվող պնդումները հիմնականում ընկալվել են «ոչ իրատեսական»:

Հեղափոխությունից հետո. Խաղաղաշինական գործունեությամբ զբաղվողների ավելի մեծ չափով թիրախավորման դեպքեր են նկատվել հեղափոխությունից հետո: Այսպես՝ ըստ «Սևազգեստ կանայք, Հայաստան» խաղաղաշինական նախաձեռնության՝ քաղաքական շահարկումների նպատակով բազմապիսի մանիպուլյացիաներ են կիրառվել նշված խմբի ակտիվիստների, ՀԿ ոլորտի ներկայացուցիչների նկատմամբ: Մասնավորապես՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում տեսանյութ է տարածվել՝ պատրաստված անհատ օգտատերերի, ինչպես նաև կազմակերպությունների էջերում տեղադրված նկարների ու հրապարակումների «սքրինշոթերի» հիման վրա, ըստ որի՝ «Սևազգեստ կանայք, Հայաստան» խաղաղաշինական նախաձեռնությունն, իբր, իրականացնում է ապազգային, հայրենասիրությանն ու բանակաշինությանը դեմ ուղղված գործունեություն: «Այդ ամենը, բնականաբար, արվում է կանխամտածված՝ նպատակ ունենալով դրանով ստեղծել բացասական հանրային տրամադրվածություն ՀԿ ոլորտի և վերջինիս ներկայացուցիչների հանդեպ» (ակտիվիստ, 2018 թ. հոկտեմբերի 20):

Մեր հարցազրույցներին մասնակցած ակտիվիստներից մեկը նաև մտահոգություն է հայտնում, որ պաշտպանության ոլորտի պատասխանատուները ոլորտի ՀԿ-ների հետ համագործակցելու, բանակում առկա խնդիրները քննարկելու ուղղությամբ մինչ օրս քայլեր չեն ձեռնարկել:

Վերջաբան

Սույն տարեկան զեկույցը կազմվել է 2018 և 2019 թվականներին 15 իրավապաշտպանների, ակտիվիստների ու լրագրողների հետ ունեցած հարցազրույցների, «Փինք», «Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունների, «Սևազգեստ կանայք, Հայաստան» խաղաղաշինական նախաձեռնություն տրամադրած նյութերի և տվյալների, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի՝ «2018 թվականի ապրիլի 13-20-ը խաղաղ հավաքների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների մասին հաշվետվության», «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի, Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ ելույթի, ինչպես նաև «Մարդու իրավունքների տուն Երևան» հասարակական կազմակերպության կողմից իրականացված մշտադիտարկման տվյալների հիման վրա:

Հարցազրույցներ.

- Անի Խաչատրյան (2018 թ. սեպտեմբերի 6),
- Ասյա Խաչատրյան (2019 թ. փետրվարի 23),
- Արփի Բալյան (2018 թ. նոյեմբերի 9),
- Արփինե Գալֆայան (2018 թ. սեպտեմբերի 6),
- Գեղամ Վարդանյան (2018 թ. հոկտեմբերի 22),
- Գոհարիկ Տիգրանյան (2018 թ. սեպտեմբերի 10),
- Դավիթ Պետրոսյան (2018 թ. սեպտեմբերի 5, 2019 թ. փետրվարի 19),
- Շառա Հարությունյան (2018 թ. նոյեմբերի 9),
- Թեհմինե Ենոքյան (2019 թ. փետրվարի 11),
- Ժաննա Ալեքսանյան (2018 թ. հոկտեմբերի 20),
- Լարա Ահարոնեան (2018 թ. նոյեմբերի 9),
- Հայարփի Բաղդասարյան (2018 թ. սեպտեմբերի 7),
- Մկրտիչ Կարապետյան (2018 թ. հոկտեմբերի 18),
- Վահան Կոստանյան (2018 թ. սեպտեմբերի 3),
- Տիրայր Մուրադյան (2018 թ. հոկտեմբերի 24):

Կայք՝ https://humanrightshouse.org
Սոցիալական ցանց՝ https://www.facebook.com/HRHYerevan
https://www.instagram.com/HRHYerevan
Հեռ.՝ +374 10 329032
Էլ. հասցե՝ hrhyerevan@gmail.com
Հասցե՝ Հովսեփ Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան

Մարդու իրավունքների տուն

Երևան